ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Գ Լ Խ Ա Վ Ո Ր Ք Ա Ր Տ Ո Ւ Ղ Ա Ր

ք. Երևան «11» ապրիլի 2022 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 03-Ա[1]

ՀԱՍՄԻԿ ԷԴՎԱՐԴԻ ՌԱՖԱՅԵԼՅԱՆԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի «Քաղաքացիական ծառայողի փորձաշրջանի հետ կապված առանձնահատկությունները սահմանելու մասին» N 441-Ն որոշման հավելվածի 7-րդ և 8-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 18-1-28.2-Մ4-1) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հարցազրույց անցկացնող հանձնաժողովի եզրակացությունն ու Հասմիկ Ռաֆայելյանի անձնական դիմումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ.

1. Հասմիկ Էդվարդի Ռաֆայելյանին 2022 թվականի ապրիլի 12-ից ինն ամիս փորձաշրջանով նշանակել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 18-1-28.2-Մ4-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնում:

2. Փորձաշրջանի համակարգող նշանակել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի անձնակազմի կառավարման բաժնի բարեվարքության հարցերով կազմակերպիչ Լուսինե Մարտիրոսյանին:

3. Հ. Ռաֆայելյանի ամսական աշխատավարձի չափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Լ. ՖԱՐՄԱՆՅԱՆ